ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2019

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 4

Խմբի համարը	
Նստարանի համարը	

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 **Ե՞րբ է գահակալել Թութմոս III-ը.**

1) Ք.ա. 1468-1434 թթ.
2) Ք.ա. 1352-1336 թթ.
3) Ք.ա. 1279-1213 թթ.
4) Ք.ա. 1540-1517 թթ.

2 **Ե՞րբ է ստեղծվել Մակեդոնիա պրովինցիան.**

1) Ք.ա. 152 թ.
2) Ք.ա. 148 թ.
3) Ք.ա. 146 թ.
4) Ք.ա. 168 թ.

3 **Ե՞րբ է քրիստոնեությունը հռչակվել Հռոմեական կայսրության պետական կրոն.**

1) 325 թ.
2) 375 թ.
3) 381 թ.
4) 313 թ.

4 **Ե՞րբ են սկսել Անգլիան անվանել նաև Մեծ Բրիտանիա.**

1) 1707 թ.
2) 1791 թ.
3) 1832 թ.
4) 1679 թ.

5 **Ե՞րբ է Իրանի ազերի բնակչությունը Ռուսաստանի դրդմամբ զինված ապստամբություն բարձրացրել.**

1) 1921 թ.
2) 1922 թ.
3) 1923 թ.
4) 1920 թ.

6 **Ե՞րբ է ստորագրվել Միավորված ազգերի հռչակագիրը.**

1) 1942 թ. հունվարի 1-ին
2) 1943 թ. փետրվարի 2-ին
3) 1945 թ. մարտի 1-ին
4) 1941 թ. դեկտեմբերի 6-ին

7 **Ե՞րբ են Մեծ Բրիտանիայում Թ. Բլեյրի գլխավորությամբ իշխանության եկել լեյբոլիստները.**

1) 1994 թ.
2) 1997 թ.
3) 1999 թ.
4) 1990 թ.

8 **Ի՞նչ անունով է հայտնի Հուստինիանոս կայսեր կողմից ստեղծված օրենքների ժողովածուն.**

1) «Բարձրագույն օրենքներ»
2) «Կայսերական օրենքների հավաքածու»
3) «Բյուզանդական իրավունքի ժողովածու»
4) «Քաղաքացիական իրավունքի հավաքածու»

9 **Ալեքսանդր Մակեդոնացու մահից հետո ո՞ր սատրապներին տրվեցին Մակեդոնիան և Հունաստանը.**

1) Անտիգոնոս և Էվմենես
2) Լիսիմաքոս և Պտղոմեոս
3) Անտիպատրոս և Կասանդրոս
4) Անտիպատրոս և Կրատերոս

10 **Դիոկղետիանոս կայսեր բարեփոխումների արդյունքում ո՞ր քաղաքը դարձավ Հռոմեական կայսրության արևմտյան կենտրոն.**

1) Բյուզանդիոն
2) Միլան
3) Հռոմ
4) Ադրիանապոլիս

11 **Ո՞րը Խաչակրաց տիրույթները պաշտպանելու նպատակով պապականության հովանու ներքո ստեղծված երեք հոգևոր-ասպետական միաբանություններից չէ.**

1) Լատինական
2) Տևտոնական
3) Հիվանդախնամների
4) Տաճարականների

12 **Ո՞վ էր նպատակ դրել Միջերկրական ծովը վերածել «իտալական լճի».**

1) Ջ.Անդրեոտին
2) Բ. Մուսսոլինին
3) Ջ.Գարիբալդին
4) Ս. Բերլուսկոնին

13 **Ո՞ր ճակատամարտում է առաջին անգամ տանկեր օգտագործվել.**

1) Լուվեն քաղաքի
2) Իպր քաղաքի
3) Մառն գետի
4) Սոմ գետի

14 **Ո՞վ է եղել «բարգավաճման ժամանակաշրջանի» նախագահը ԱՄՆ-ում.**

1) Հարրի Թրումանը
2) Ջոն Քենեդին
3) Քալվին Քուլիջը
4) Թեոդոր Ռուզվելտը

15 **Ի՞նչ էր կոչվում զինվորական ծառայության դիմաց ցմահ տրվող հողը Ֆրանկական թագավորությունում.**

1) վասիլես
2) հայրենիք
3) բենեֆիցիում
4) վոտչինա

16 **Ֆրանսիայի հարավային շրջաններում կալվինականներին անվանում էին հուգենոտներ, որը գերմաներեն նշանակում է.**

1) «պապի իշխանության դեմ համախմբվածներ»
2) «եկեղեցու խորհուրդները մերժողներ»
3) «համատեղ երդում տվածներ»
4) «միասնության համար պայքարողներ»

17 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Բաբելոնի գրավումը Թիգլաթպալասար III-ի կողմից
բ. Հին պարսկական ցեղերի մուտքը Հարավային Իրան և ցեղապետությունների հիմնումը
գ. Բաբելոնի նվաճումը Թուկուլտի-Նինուրտա I-ի կողմից
դ. Ասորեստանի ռազմաքաղաքական վերելքը Սալմանասար I-ի օրոք
ե. Ամորեական առաջնորդ Շամշի-Ադդուինի հռչակումը Աշուրի արքա

1) ե, դ, գ, բ, ա
2) ե, բ, գ, ա, դ
3) դ, ե, գ, բ, ա
4) դ, ե, գ, ա, բ

18 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Երուսաղեմի գրավումը բաբելոնյան զորքերի կողմից
բ. Բարդիայի ապստամբությունը
գ. Մասագետների դեմ մղված ճակատամարտում պարսկական զորքերի ծանր պարտությունը
դ. Էքբատան մայրաքաղաքի գրավումը Կյուրոս II-ի կողմից

1) ա, դ, գ, բ
2) դ, բ, ա, գ
3) դ, գ, ա, բ
4) ա, գ, բ, դ

19 **Իրավական փաստաթղթերը դասավորել ըստ դրանց ստեղծման ժամանակագրական հաջորդականության.**

ա. «Ազատ ձեռներեցության մասին օրենքի» ընդունումը Ռուսաստանում
բ. «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրրի» հաստատումը Ֆրանսիայում
գ. Անձի անձեռնմխելիության մասին օրենքի ընդունումը Անգլիայում
դ. Սարդինիայի արքայական հատուկ օրենքով Սահմանադրության ստեղծումը Իտալիայում
ե. «Համադաշնության հոդվածներ» անունով սահմանադրության գործողության մեջ մտնելը ԱՄՆ-ում

1) ա, գ, բ, դ, ե
2) գ, ե, բ, ա, դ
3) ա, ե, գ, դ, բ
4) գ, ա, ե, բ, դ

20 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Իտալիայի և Վատիկանի միջև պայմանագրի կնքումը. փոխադարձաբար միմյանց սուվերենության ճանաչումը
բ. «Մարտական խաչեր» ֆաշիստական կազմակերպության ստեղծումը Ֆրանսիայում
գ. Թուրք ազգի անկախության գաղափարի ձևակերպումը Էրզրումի և Սվազի կոնգրեսներում ընդունված հռչակագրերում
դ. Սիրիա պետության ստեղծումը

1) դ, գ, բ, ա
2) գ, բ, ա, դ
3) գ, դ, բ, ա
4) բ, ա, գ, դ

21 **Ե՞րբ է ցրվել Աթենական ծովային միությունը.**

1) Ք.ա. 415 թ.
2) Ք.ա. 404 թ.
3) Ք.ա. 401 թ.
4) Ք.ա. 421 թ.

22 **Ե՞րբ է ավարտվել Ռիսորջիմենտոյի ժամանակաշրջանը.**

1) 1862 թ.
2) 1866 թ.
3) 1871 թ.
4) 1861 թ.

23 **Ե՞րբ է իր գործունեությունը սկսել ՄԱԿ-ի միջազգային դատարանը.**

1) 1947 թ.
2) 1948 թ.
3) 1949 թ.
4) 1946 թ.

24 **Ե՞րբ է Հայաստանը վավերացրել ԱՊՀ կանոնադրությունը.**

1) 1993 թ. դեկտեմբերի 14-ին
2) 1994 թ. մարտի 16-ին
3) 1995 թ. ապրիլի 20-ին
4) 1992 թ.նոյեմբերի 21-ին

25 **Ե՞րբ է Հոլանդիայի Մաաստրիխտ քաղաքում Եվրոպական ընկերակցության պետությունների ղեկավարների կողմից ստորագրվել Եվրոպական միության ստեղծման վերաբերյալ պայմանագիրը.**

1) 1991 թ.
2) 1992 թ.
3) 1993 թ.
4) 1990 թ.

26 **Ո՞ր տարածքը 395 թ. կայսրության բաժանումից հետո Արևելահռոմեական կայսրության կազմի մեջ չի մտել.**

1) Հնդկաստանը
2) Հյուսիսային Միջագետքը
3) Բալկանյան թերակղզին
4) Եգիպտոսը

27 **Ո՞ր կրոնական համակարգի համաձայն էին մարդիկ բաժանված երկու խմբի՝ «վեհանձն այրերի» և «մանր մարդկանց».**

1) կոնֆուցիկանության
2) բրահմայականության
3) զրադաշտականության
4) հինդուիզմի

28 **Ո՞վ էր 1950 - 1960 ական թթ. գլխավորում սևամորթ մահմեդականների շարժումն ԱՄՆ-ում.**

1) Մ. Իքսը
2) Մ. Քինգը
3) Ֆ. Ռայթը
4) Ջ. Ջոնսը

29 **Ի՞նչ էր աշխարհիկ ինվեստիտուրայի ժամանակ կայսրը հանձնում եպիսկոպոսին կամ վանահորը ընտրությունից հետո.**

1) մատանի
2) թագ
3) գավազան
4) գայիսոն

30 **Ո՞ր գրողը նոբելյան մրցանակ չի ստացել.**

1) Ուիլյամ Ֆոլկներ
2) Ալբեր Քամյու
3) Էռնեստ Հեմինգուեյ
4) Ֆրանց Կաֆկա

31 **Ո՞րը Քաղկեդոնի չորրորդ տիեզերական ժողովի հետևանքներից չէ.**

1) Հայկական, եգիպտական, ասորական եկեղեցիները չընդունեցին Կոստանդնուպոլսի պատրիարքության գերագահությունը և կազմեցին քրիստոնեության Արևելյան ուղղափառ ուղղությունը:
2) Բալկանյան թերակղզում գործող Իլիրիայի թեմը չընդունեց Կոստանդնուպոլսի աթոռի գերիշխանությունը և շարունակվեց ենթարկվել Հռոմի պապին:
3) Եգիպտական, ասորական եկեղեցիները չընդունեցին Ալեքսանդրիայի պատրիարքության գերիշխանությունը և շարունակվեցին ենթարկվել Կոստանդնուպոլսի պատրիարքությանը:
4) Կոստանդնուպոլսի աթոռը գերիշխող դիրք ստացավ Արևելքի պատրիարքությունների շարքում:

32 **Ո՞րը Վերսալ - վաշինգտոնյան համակարգի անկայունության և անհաստատության պատճառներից չէ.**

1) Պարտված տերություններին բարի դրացիների վերածելու ուղղությամբ քայլերի բացակայությունը:
2) Եվրոպայի նոր պետությունների սահմանների որոշումը առանց այնտեղ բնակվող ժողովուրդների շահերը հաշվի առնելու:
3) Դաշնակիցների կողմից, հետպատերազմյան կարգավորման ընթացքում, տնտեսական խնդիրների կարևորության թերագնահատումը:
4) Հաղթող երկրներում միջազգային նոր կառույցների ստեղծումը:

33 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Եգիպտոսի գրավումը Մակեդոնացու բանակների կողմից
բ. Դարեհ III-ի զորքերի պարտությունը Իսոսի ճակատամարտում
գ. Հունական պոլիսների նվաճման ամրագրումը Կորնթոսում հավաքված համահունական վեհաժողովում
դ. Մակեդոնական բանակի հաջողությունները Բեոտիայի Քերոնեայի ճակատամարտում
ե. Բակտրիայի և Սոգդիանայի գրավումը Մակեդոնացու բանակների կողմից

1) դ, գ, բ, ա, ե
2) գ, դ, ա, ե, բ
3) գ, դ, ե, բ, ա
4) դ, գ, ա, բ, ե

34 **Պայմանագրերը դասավորել ըստ դրանց կնքման ժամանակագրական հաջորդականության.**

ա. Թուրքմենչայի պայմանագիր
բ. Սևրի պայմանագիր
գ. Բրեստ Լիտովսկի պայմանագիր
դ. Սան Ստեֆանոյի պայմանագիր
ե. Լոզանի պայմանագիր

1) դ, ա, գ, բ, ե
2) ա, դ, գ, ե, բ
3) ա, դ, ե, գ, բ
4) դ, ա, բ, գ, ե

35 **Հետևյալ արտահայտություններից ո՞րի հեղինակն է Թոմաս Մորը.**

1) «Թագավորն իշխում է, բայց չի կառավարում»
2) «Ձեր ոչխարները խժռում են մարդկանց»
3) «Ում իշխանությունը, նրա էլ՝ հավատը»
4) «Չկա ուրիշ իշխանություն, բացի Աստծո տվածից»

36 **Վարչապետի պաշտոնում ընտրվելուց հետո ո՞վ է հանդես եկել հետևյալ հայտարարությամբ.**

«Մեր քաղաքականությունը միտված է ապահովելու, որ կայուն եկամուտ ունեցող յուրաքանչյուր ոք դառնա սեփականատեր: Մենք կառուցում ենք սեփականատերերի ժողովրդավարություն»:

1) Շառլ դը Գոլը
2) Ջ. Մեյջորը
3) Ջ. Անդրեոտտին
4) Մ. Թեթչերը

37 **Քաղաքները համապատասխանեցնել երկրների անվանումներին.**

1. Հերակլեոպոլիս
2. Քիշ
3. Կուսսար
4. Դուր-Կուրիգալզու
5. Էքբատան

ա. Մարաստան
բ. Շումեր
գ. Եգիպտոս
դ. Բաբելոնիա
ե. Խեթական պետություն
զ. Հռոմեական կայսրություն

1) 1-զ, 2-բ, 3-գ, 4-դ, 5-ա
2) 1-ա, 2-գ, 3-ե, 4-բ, 5-դ
3) 1-զ, 2-դ, 3-գ, 4-ե, 5-բ
4) 1-գ, 2-բ, 3-ե, 4-դ, 5-ա

38 **Կատարել համապատասխանեցում.**

1. Ֆրիդրիխ I Շիկամորուս
2. Միքայել VII Պալեոլոգոս
3. Ֆիլիպ II Օգոստոս
4. Հովհան Անհողին
5. Կառլոս Մեծ

ա. Իսպանիայի թագավոր
բ. Ֆրանսիայի թագավոր
գ. Նիկիայի կայսր
դ. Անգլիայի թագավոր
ե. Գերմանիայի կայսր
զ. Ֆրանկական պետության թագավոր

1) 1-դ, 2-գ, 3-զ, 4-բ, 5-ա
2) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ, 5-զ
3) 1-ե, 2-գ, 3-բ, 4-դ, 5-զ
4) 1-ա, 2-զ, 3-բ, 4-գ, 5-ե

39 **Ո՞ր մարմինն է ստացել «աշխարհում ամենաբարձր վարձատրվող տղամարդկանց երգչախումբ» անվանումը.**

1) Գլխավոր շտատները Ֆրանսիայում
2) Բարձրագույն խորհուրդը Օսմանյան կայսրությունում
3) Ռայխստագը Գերմանիայում
4) Լորդերի ատյանը Մեծ Բրիտանիայում

40 **Ո՞ր երկրում տեղի ունեցած իրադարձությունն է պատմաբանների կողմից ստացել «Փառահեղ հեղափոխություն» անվանումը.**

1) Գերմանիայում
2) Իտալիայում
3) Անգլիայում
4) Ֆրանսիայում

41 **Ո՞րն է Ամենհոտեպ IV փարավոնի կողմից ձեռնարկված բարեփոխումների հետևանք.**

1) Նեղոսի դելտայում հազարավոր հեկտար հողատարածություններ դարձան ոռոգվի:
2) Սահմանափակվեց Ամոն աստծո պաշտանմունքը:
3) Վերսկսվեցին արտաքին նվաճումները, պետության սահմանները խիստ ընդարձակվեցին:
4) Երկրում փաստացի իշխանությունն անցավ բարձրաստիճան քրմության ձեռքը:

42 **Ո՞րն է Ազգերի լիգայի ձախողման գլխավոր պատճառը.**

1) Ալբանիա-իտալական պատերազմում Ալբանիայի հաղթանակը:
2) Եթովպիայում և Ավստրիայում սկիզբ առած քաղաքացիական պատերազմները:
3) Վերսալ-վաշինգտոնյան համակարգի փլուզումը:
4) Խորհրդա-գերմանական համաձայնագրի կնքումը:

43 **Խաչակրաց արշավանքների հետ կապ ունեցող պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Երուսաղեմի գրավումը խաչակիրների կողմից
բ. Եդեսիա քաղաքի գրավումը Մոսուլի կառավարչի կողմից
գ. Ակրայի գրավումը մահմեդականների կողմից
դ. Կոստանդնուպոլիսի գրավումը խաչակիրների կողմից
ե. Զադար քաղաքի գրավումը խաչակիրների կողմից
զ. Իկոնիա քաղաքի գրավումը գերմանացի խաչակիրների կողմից

1) ա, զ, ե, բ, գ, դ
2) բ, ա, ե, զ, դ, գ
3) ա, բ, զ, ե, դ, գ
4) բ, զ, ե, գ, ա, դ

44 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Իսպանիայի կողմից «Անպարտելի արմադա» նավատորմի ուղարկումը Անգլիա
բ. «Բարդուղիմեոսյան գիշերը» Փարիզում
գ. Նիդերլանդների անկախության ճանաչումը Իսպանիայի կողմից
դ. Անգլիայի թագավոր Հենրիխ VIII-ի կողմից պառլամենտի ընդունած «Գերագահության մասին» ակտի ստորագրումը
ե. Մոսկվայում դասային ներկայացուցչական առաջին երկրային ժողովի հրավիրումը

1) դ, ե, բ, ա, գ
2) ա, դ, ե, գ, բ
3) դ, ե, ա, գ, բ
4) բ, ա, դ, ե, գ

45 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Հավաքական անվտանգության վերաբերյալ պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) ստեղծումը
բ. ԱՊՀ պաշտպանության նախարարների խորհրդի կազմից դուրս գալու վերաբերյալ Վրաստանի որոշման մասին հայտարարությունը
գ. ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի անդամ որոշ երկրների նախաձեռնությամբ Կոսովոյի անկախության ճանաչումը.
դ. «Թավշյա» հեղափոխության հաղթանակը Հայաստանում
ե. Ղրիմի միացումը Ռուսաստանին
զ. «Արագ արձագանքման հավաքական ուժերի ստեղծման վերաբերյալ» որոշման կայացումը ՀԱՊԿ անդամ պետությունների նախագահների կողմից

1) ա, դ, ե, գ, բ, զ
2) բ, զ, ե, ա, դ, զ
3) ա, բ, գ, զ, ե, դ
4) բ, զ, ա, գ, դ, ե

46 **Կատարել համապատասխանեցում.**

1. Թերմոպիլյան կիրճի ճակատամարտը
2. Ակցիումի ճակատամարտը
3. Պիլոս քաղաքի գրավումը
4. Սալամին կղզու ճակատամարտը

ա. Օկտավիանոս
բ. Ալկիվիադես
գ. Լեոնիդաս
դ. Թեմիստոկլես
ե. Դեմոսթենես

1) 1-դ, 2-ե, 3-գ, 4-բ
2) 1-գ, 2-ա, 3-ե, 4-դ
3) 1-գ, 2-ա, 3-դ, 4-ե
4) 1-ա, 2-բ, 3-ե, 4-դ

47 **Գործիչների անունները համապատասխանեցնել նրանց զբաղեցրած պաշտոններին.**

1. Լ. Ջորջ
2. Ժ. Կլեմանսո
3. Կ.Ադենաուեր
4. Հ. Թրուման
5. Վ. Օռլանդո

ա. Իտալիայի վարչապետ
բ. ԱՄՆ-ի նախագահ
գ. Մեծ Բրիտանիայի վարչապետ
դ. Գերմանիայի Դաշնային Հանրապետության վարչապետ
ե. Ճապոնիայի վարչապետ
զ. Ֆրանսիայի վարչապետ

1) 1-դ, 2-ե, 3-ա, 4-բ, 5-գ
2) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ, 5-զ
3) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ, 5-ե
4) 1-գ, 2-զ, 3-դ, 4-բ, 5-ա

48 **Գահակալների անունները համապատասխանեցնել նրանց հետ կապված իրադարձություններին.**

1. Օտտոնն I
2. Կարլոս Մեծ
3. Պիպին Կարճահասակ
4. Հենրիխ I
5. Կարլոս Մարտել

ա. Նա Հռոմի պապի հետ պայմանագիր կնքեց, ըստ որի պապը ընդունում էր կայսեր գերիշխանությունը:
բ. Նա երկու արշավանք կազմակերպեց լանգոբարդների դեմ և Հյուսիսային Իտալիան միացրեց իր թագավորությանը:
գ. Նա գահընկեց արեց Մերովինգներին և յուրացրեց թագավորական տիտղոսը:
դ. Նրա գլխավորությամբ գերմանացիները առաջին անգամ պարտության մատնեցին հունգարներին:
ե. Մեծաքանակ հեծելազոր ստեղծելու նպատակով նա զինվորներին հող էր տրամադրում այնտեղ ապրող գյուղացիների հետ միասին:
զ. Նա ոտաբոբիկ երեք օր կանգնեց Կանոսա ամրոցի դիմաց և ծնկաչոք վիճակում թողություն ստացավ Գրիգորիս VII պապից:

1) 1-բ, 2-ա, 3-գ, 4-դ, 5-զ
2) 1-դ, 2-բ, 3-ե, 4-զ, 5-ա
3) 1-ե, 2-դ, 3-ա, 4-զ, 5-գ
4) 1-ա, 2-բ, 3-գ, 4-դ, 5-ե

49 **Տարեթվերը համապատասխանեցնել պատմական իրադարձություններին.**

1. 1867 թ.
2. 1861 թ.
3. 1848 թ.
4. 1854 թ.
5. 1878 թ.

ա. Ճորտատիրության վերացումը Ռուսաստանում
բ. Սահմանադիր ժողովի կողմից Երկրորդ հանրապետության սահմանադրության հաստատումը Ֆրանսիայում
գ. Ղրիմի պատերազմի ավարտը
դ. Ավստրիայի և Հունգարիայի միջև համաձայնագրի կնքումը, Ավստրո-Հունգարիա պետության ստեղծումը
ե. Խորհրդարանի ցրումը և միանձնյա կառավարման համակարգի հաստատումը սուլթան Աբդուլ Համիդ II –ի կողմից
զ. Հանրապետական կուսակցության հիմնադրումը ԱՄՆ-ում

1) 1-ա, 2-գ, 3-բ, 4-ե, 5-զ
2) 1-դ, 2-ա, 3-բ, 4-զ, 5-ե
3) 1-ե, 2-ա, 3-զ, 4-բ, 5-գ
4) 1-զ, 2-ա, 3-դ, 4-բ, 5-ե

50 **Երկրորդ աշխարհամարտի իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերին.**

1. Ստալինգրադի ճակատամարտի սկիզբը
2. Հարավսլավիայի և Հունաստանի նվաճումը Գերմանիայի և Իտալիայի կողմից
3. Անձնատվության պայմանագրով Ֆրանսիայի տարածքի 2/3-րդի բռնազավթումը Գերմանիայի կողմից
4. Պատերազմում ԽՍՀՄ-ին աջակցելու մասին Մեծ Բրիտանիայի հայտարարությունը
5. Ամերիկյան Պիրլ Հարբոր ռազմածովային հենակայանի ռմբակոծումը Ճապոնիայի կողմից

ա. 1940 թ. հունիս
բ. 1941 թ. ապրիլ
գ. 1942 թ. փետրվար
դ. 1941 թ. դեկտեմբեր
ե. 1941 թ. հունիս
զ. 1942 թ. նոյեմբեր

1) 1-գ, 2-ե, 3-բ, 4-դ, 5-զ
2) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ, 5-ե
3) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ե, 5-զ
4) 1-զ, 2-բ, 3-ա, 4-ե, 5-դ

51 **Իրանի Աղա Մոհամմադ խանի գահակալության ժամանակահատվածի վերաբերյալ նշված փաստարկներից ո՞րն է սխալ.**

1) Նրա օրոք երկրի նոր մայրաքաղաք հռչակվեց Թեհրանը:
2) Աղա Մոհամմադ խանը հանդիսանում է Ղաջարների թյուրքական ցեղի հարստության հիմնադիրը:
3) Ծագեց անգլո-իրանական հակամարտություն աֆղանական Հերաթ քաղաքի համար:
4) Իրանական բանակը ներխուժեց Անդրկովկաս և գրավեց Ղարաբաղը:

52 **Օսմանյան կայսրության երիտթուրքական իշխանության շրջանի վերաբերյալ նշված փաստարկներից ո՞րն է ճիշտ**

1) 1914 թ. ծայրահեղ մեծապետական, քաղաքական-հասարակական ուսմունք պանթյուրքիզմը հռչակվեց պաշտոնական գաղափարախոսություն:
2) Սուլթան Համիդ I-ին հաջորդած Մեհմեդ Ռեշադ V-րդը լիովին գտնվում էր երիտթուրքերի ազդեցության տակ:
3) Փորձելով իրականացնել նվաճողական պանթյուրքիստական ծրագրերը՝ երիտթուրքերի պարագլուխները միացան Ռուսաստանի կողմից ղեկավարվող դաշինքին և Օսմանյան կայսրությունը ներքաշեցին Առաջին համաշխարհային պատերազմի մեջ:
4) Երիտթուրքերի տիրապետության շրջանում Օսմանյան կայսրությունում արձանագրվեցին լուրջ հաջողություններ և՛ ներքին, և՛ արտաքին ոլորտներում:

53 **ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի վերաբերյալ բերված փաստերից ո՞րն է սխալ.**

1) Անվտանգության խորհուրդը գլխավոր խորհրդակցական և ներկայացուցչական մարմին է, որտեղ ներկայացված են բոլոր անդամ երկրները:
2) Անվտանգության խորհուրդը իրավասու է որոշում ընդունելու միջազգային պատժամիջոցների կիրառման, խաղաղապահ ուժերի առաքման և ռազմական գործողությունների իրագործման վերաբերյալ:
3) Անվտանգության խորհրդի 10 ոչ մշտական, անդամները ընտրվում են Գլխավոր ասամբլեայի կողմից՝ 2 տարի ժամկետով:
4) Անվտանգության խորհրդի գործունեության կարևոր սկզբունքներից է նրա 5 մշտական անդամների միաձայնությունն ու վետոյի իրավունքը:

54 **Ի՞նչ է մաքքարթիզմը.**

1) 1960 - ական թթ. Անգլիայի գաղութներում սկիզբ առած ազգային –ազատագրական շարժում
2) 1950 - ական թթ. ԱՄՆ - ում սկիզբ առած հակակոմունիստական արշավ
3) 1970 - ական թթ. ԱՄՆ - ում սկիզբ առած ազգային-պահպանողական շարժում
4) 1970 - ական թթ. Արևմտյան Եվրոպայում սկիզբ առած հակախորհրդային արշավ

55 **Հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. խալիֆա	ա. Օսմանյան կայսրության գահակալ
2. խան	բ. Ռուսաստանի գահակալ
3. սուլթան	գ. Իրանի գահակալ
4. փարավոն	դ. Արաբական պետության գահակալ
5. ցար	ե. Հռոմեական կայսրության գահակալ
6. կայսր	զ. Ասորեստանի գահակալ
	է. Եգիպտոսի գահակալ

1) 1-զ, 2- գ, 3-ա, 4-բ, 5-դ, 6-ե
2) 1-բ, 2-դ, 3-ե, 4-է, 5-գ, 6-ա
3) 1-դ, 2-գ, 3-ա, 4-է, 5-բ, 6-ե
4) 1-դ, 2-գ, 3-զ, 4-բ, 5-ե, 6-ա

56 **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. արեոպագոս	ա. ավագների խորհուրդ Հին Սպարտայում
2. դեմարքոս	բ. ավագների խորհուրդ Աթենքում
3. ստրատեգոս	գ. աթենական աշխարհազորը ղեկավարող պաշտոնյա
4. պերիօյկոս	դ. փարավոնի կողմից տեղերում նշանակվող պաշտոնյա Հին Եգիպտոսում
5. նոմարքոս	
6. գերուսիա	ե. սպարտական պետության սահմանամերձ շրջաններում ապրող անձնապես ազատ, սակայն քաղաքացիական իրավունքներ չունեցող բնակչություն
	զ. ընտրովի ղեկավար պաշտոնյա Աթենքում

1) 1-ա, 2-գ, 3-զ, 4-ե, 5-բ, 6-դ
2) 1-ե, 2-ա, 3-զ, 4-գ, 5-դ, 6-բ
3) 1-բ, 2-զ, 3-գ, 4-ե, 5-դ, 6-ա
4) 1-ե, 2-զ, 3- դ, 4-գ, 5-ա, 6-բ

57 **Նշված փաստարկներից ընտրել չորսը, որոնք հանդիսանում են Խեթական պետության տրոհման և թուլացման պատճառներ.**

ա. Փոքր Ասիայում շարունակվող տնական երաշտը:
բ. Ասորեստանի, միկենյան հույների և մյուս հակառակորդների դեմ մղվող մշտական պայքարը:
գ. Եգիպտոսի դեմ մղվող մշտական պատերազմները:
դ. Ներքին երկպառակչական պատերազմները:
ե. Աթենքի կողմից Խեթական պետության ենթակա Բաբելոն քաղաքի և Հարավային Միջագետքի քաղաքների նվաճումը:
զ. Մակեդոնիայի կողմից Խեթական պետության հարավային տարածքների նվաճումը:
է. Փոքր Ասիայի արևմտյան տարածքների և Կիպրոս կղզու կորուստը:

1) դ, ե, զ, է
2) ա, բ, դ, է
3) ա, բ, գ, զ
4) բ, գ, դ, ե

58 **Նշված փաստարկներից ընտրել չորսը, որոնք հանդիսանում են Կլիսթենեսի բարեփոխումների հետևանքներ.**

ա. Ատտիկան բաժանվեց երեք վարչական շրջանների, որոնցից յուրաքանչյուրը բաժանվեց 10 մասերի:
բ. Ստեղծվեց ատենակալների դատարանը:
գ. Մտցվեց օստրակիզմը:
դ. Աթենքում մշտապես բնակվող օտար պոլիսների ներկայացուցիչները քաղաքացիություն ստացան:
ե. Ստեղծվեց 10 ստրատեգոսների խորհուրդը:
զ. Ատտիկայում մտցվեց գույքային ցենզ, որով բնակչությունը բաժանվեց 4 գույքային խմբերի:
է. Վերացվեց պարտային ստրկությունը:
ը. Պետական պաշտոնյաների գործունեությունը վերահսկելու նպատակով սահմանվեց նրանց կողմից էկլեսիային կանոնավոր կերպով հաշվետվության ներկայացումը:

1) ա, գ, ե, ը
2) ե, զ, ը, է
3) բ, դ, ե, ը
4) գ, դ, զ, է

59 **Նշված փաստարկներից ընտրել չորսը, որոնք հանդիսանում են աշխարհագրական մեծ հայտանագործությունների հետևանքներ.**

ա. Արևելքի հին քաղաքակրությունները՝ շփվելով արևմուտքի զարգացած քաղաքակրթությունների հետ ծաղկում ապրեցին:
բ. Խախտվեց մի շարք երկրների և ժողովուրդների զարգացման բնականոն ընթացքը:
գ. Եվրոպայից Արևելք տեղափոխվեց մեծ քանակությամբ ոսկի, արծաթ:
դ. Կործանվեցին մի շարք հին քաղաքակրթություններ:
ե. Հայտնագործվեց Եվրոպայից Արևելք տանող ծովային նոր ճանապարհ:
զ. Ստեղծվեցին գաղութային կայսրությունները:
է. Տեղաբնիկների շահագործման արդյունքում ԱՄՆ-ի առևտրականների ձեռքում մեծ քանակությամբ հարստություն կուտակվեց:

1) ա, դ, ե, է
2) դ, ե, զ, է
3) գ, դ, ե, զ
4) բ, դ, ե, զ

60 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Գայոս Մարիուսի՝ Հռոմեական բանակի հրամանատար նշանակվելու մասին կոմիցիաների որոշումը
բ. Մագնեսիայի ճակատամարտը
գ. Հռոմի քաղաքացիներին հավասար իրավունքներ ունենալու համար իտալիկների ապստամբությունը
դ. Իսթմոսի ճակատամարտը
ե. Պունիկյան պատերազմների ավարտը
զ. Հռոմի գրավումը Սուլլայի կողմից և դիկտատուրայի հաստատումը
է. Մակեդոնիայի, Էպիրոսի, Հոնիական կղզիների միավորումը, Մակեդոնիա պրովինցիայի ստեղծումը
ը. Պերսևսի պարտությունը, հռոմեացիների կողմից, Էպիրոսի գրավումը
թ. Կինոսկեֆալեի ճակատամարտը
ժ. Պերսևսի կողմից հակահռոմեական դաշինքի ստեղծումը

1) ե, թ, բ, ժ, ը, է, դ, գ, ա, զ
2) զ, թ, է, դ, ա, ե, ը, գ, բ, ժ
3) ժ, թ, ը, գ, է, զ, դ, ա, ե, բ
4) թ, բ, ե, ժ, ը, է, դ, գ, ա, զ

61 **Հռոմեական կայսրերի գահակալման օրոք տեղի ունեցած պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Հռենոսից մինչև Դանուբ ընկած շրջանում համատարած սահմանային ամրությունների կառուցումը Դոմետիանոս կայսեր կողմից:
բ. Ֆլավիոսների հարստության հիմնումը Վեսպասիանոսի կողմից
գ. Մեծ քանակությամբ նախկին ստրուկների նշանակումը պետական բարձր պաշտոնների Կլավդիոս կայսեր կողմից:
դ. Դակիայի նվաճումը Տրայանոսի կողմից:
ե. Կայսրության բաժանումը երկու մասի Թեոդոսիոս կայսեր կողմից:
զ. Պետական միջոցների անհարկի վատնումները Ներոնի կողմից:
է. Բյուզանդիոն քաղաքի հռչակումը մայրաքաղաք Կոստանդիանոս կայսեր օրոք:
ը. Գերմանական ցեղերից սպառնացող վտանգի ժամանակավորապես կանխումը Մարկոս Ավրելիոսի կողմից:
թ. Կայսեր անունը կրող ամրությունների շղթայի կառուցումը Բրիտանիայում Հադրիանոս կայսեր կողմից:

1) դ, զ, գ, ա, թ, ը, ե, է, բ
2) զ, ա, գ, բ, թ, դ, ը, ե, է
3) բ, գ, զ, թ, ա, ը, դ, է, ե
4) գ, զ, բ, ա, դ, թ, ը, է, ե

62 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Հյուսիսային Չինաստանի գրավումը մոնղոլների կողմից
բ. Եդեսիայի և Անտիոքի գրավումը խաչակիրների կողմից
գ. Համամոնղոլական առաջին համագումարի (ղուրուլթայ) հրավիրումը
դ. Հռոմի պապի դեսպանների և Կոստանդնուպոլսի պատրիարքի փոխադարձաբար միմյանց բանադրումը և քրիստոնեական եկեղեցու պառակտումը
ե. Բաղդատի գրավումը մոնղոլների կողմից
զ. Մակեդոնական արքայատոհմի գահակալության շրջանի ավարտը
է. Օսմանյան թուրքերի կողմից Բրուսա բերդաքաղաքի գրավումը և հռչակումը մայրաքաղաք
ը. Արաբական խալիֆայության մայրաքաղաք Բաղդատի գրավումը թյուրք-սելջուկների կողմից
թ. Յարոսլավ Իմաստունի գահակալության սկիզբը
ժ. Իկոնիայի սուլթանության հիմնադրումը

1) դ, զ, թ, ե, գ, բ, ը, ա, է, ժ
2) թ, դ, ը, զ, ժ, բ, գ, ա, ե, է
3) դ, թ, ը, ժ, զ, գ, բ, ե, է, ա
4) ը, դ, թ, ե, զ, բ, ժ, ա, գ, է

63 **Ո՞ր կառավարման վարչակարգում է գործում հետևյալ սկզբունքը**

«Անհատ անձ է մնում միայն քնած մարդը»:

1) ամբողջատիրական
2) ժողովրդավարական
3) թեոկրատական
4) ազատական (լիբերալ)

64 **Քաղաքական ո՞ր գործչին է պատկանում հետևյալ արտահայտությունը.**

«Ժամանակը վատ դաշնակից է»:

1) Ֆրանկլին Ռուզվելտ
2) Վուդրո Վիլսոն
3) Ուինսթոն Չերչիլ
4) Նապոլեոն Բոնապարտ

65 **Կատարել համապատասխանեցում.**

N	Մշակույթի գործիչ	N	Դարաշրջան	N	Գաղափար
1	Պտղոմեոս	1	Ք. ա. V դ	1	Ըստ նրա տեսության՝ թիվը բոլոր իրերի կեցության սկզբունքն է:
2	Հիպարքոս	2	Ք. հ. II դ	2	Նա հաղորդել է տեղեկություններ հույն-պարսկական պատերազմների մասին:
3	Պյութագորաս	3	Ք.ա. II դ	3	Նա կազմեց աստղացուցակ, որը պարունակում էր շուրջ հազար աստղերի երկնային դիրքաթվերը և պայծառությունների գնահատականները:
4	Հերոդոտոս	4	Ք. ա. VI դ	4	Նա աշխարհի նյութական հիմք էր համարում ապեյրոնը (անվերջ, անորոշ սկզբնանյութ):
		5	Ք. ա. I դ	5	Նա զարգացրեց տիեզերքի երկրակենտրոն կառուցվածքի մասին տեսությունը:

1

1	3	5
2	2	3
3	1	1
4	5	4

2

1	1	4
2	5	2
3	4	1
4	2	5

3

1	4	3
2	2	1
3	1	5
4	5	2

4

1	2	5
2	3	3
3	4	1
4	1	2

66 **Առաջին աշխարհամարտի մասնակից երկրների անվանումները համապատասխանեցնել այդ երկրների հիմնական նպատակներին.**

1. Ավստրո-Հունգարիա
2. Իտալիա
3. Մեծ Բրիտանիա
4. Ֆրանսիա
5. Ռուսաստան
6. Ճապոնիա

ա. Նպատակ ուներ պահպանել իր գաղութային կայսրության ամբողջականությունը, ջախջախել Գերմանիային, ինչպես նաև մասնատել Օսմանյան կայսրությունը, նվաճել Միջագետքը, Պաղեստինը և հաստատվել Եգիպտոսում:

բ. Նպատակ ուներ նվաճել Միջին Ասիան, Իրանական Ատրպատականը, Հնդկաստանը և Չինաստանը:

գ. Նպատակ էր դրել տիրանալ Էլզասին և Լոթարինգիային, զավթել հանքերով հարուստ Հռենոսի ձախ ափը, ինչպես նաև նվաճել Սիրիան, Կիլիկիան և գերմանական գաղութներ:

դ. Նպատակ էր դրել կանխել սլավոնական նոր պետությունների կազմավորումը Բալկաններում, զավթել Սերբիան, Չեռնոգորիան, ինչպես նաև գերիշխել Սև, Էգեյան, Ադրիատիկ ծովերում:

ե. Նպատակ ուներ Խաղաղ օվկիանոսում գրավել գերմանական գաղութներ և տիրել Չինաստանին:

զ. Նպատակ ուներ իր գերիշխանությունը տարածել բալկանյան երկրներում, մասնատել Օսմանյան կայսրությունը, զավթել Բոսֆորի, Դարդանելի նեղուցները, Արևմտյան Հայաստանը և հասնել Միջերկրական ծով:

է. Ձգտում էր տիրանալ Ադրիատիկ ծովի հյուսիսային ափերին, զավթել Ալբանիան, գերիշխել Միջերկրական ծովում:

1) 1-դ, 2-բ, 3-ա, 4-գ, 5-ե, 6-զ
2) 1-դ, 2-է, 3-ա, 4-գ, 5-զ, 6-ե
3) 1-ա, 2-է, 3-գ, 4-դ, 5-զ, 6-ե
4) 1-ա, 2-դ, 3-գ, 4-է, 5-զ, 6-ե

67 **Մակեդոնական (Հայկական) արքայատոմի գահակալման շրջանի վերաբերյալ բերված փաստերից ո՞ր չորսն են ճիշտ.**

ա. Բյուզանդիան հետ գրավեց Հյուսիսային Միջագետքը, Ասորիքը, Պաղեստինը, Փոքր Ասիայի արևելյան շրջանները, նվաճեց Բուլղարական թագավորությունը, Բալկանյան թերակղզին՝ մինչև Դանուբ գետը:

բ. Արաբները և պեչենեգները գրավեցին Հյուսիսային Միջագետքը, Ասորիքը, Պաղեստինը և Փոքր Ասիայի արևելյան շրջանները:

գ. Կայսրությունում ձևավորվեց կառավարման նոր համակարգ. գերատեսչությունների քանակը հասավ 60-ի:

դ. Պատրիարք Փոթիոսի մշակած ծրագիրը իրագործելու նպատակով Բուլղարիա, Մեծ Մորավիա և Ռուսիա ուղարկվեցին քարոզիչներ:

ե. Կառավարման համակարգում ամենամեծ դերակատարումը վերապահվեց Ծերակույտին:

զ. Բյուզանդիայի համար հայտնվեցին նոր թշնամիներ՝ արևելքում՝ սկյութները և վայրագները, Բալկանյան թերակղզում՝ պեչենեգները:

է. Պապականությունը իր ենթակայության տակ վերցրեց Հարավային Իտալիայում գտնվող հունական եկեղեցին:

1) ա, գ, դ, է
2) բ, գ, զ, է
3) գ, դ, ե, զ
4) բ, դ, ե, զ

68 **1921 թ. փետրվարին կնքված խորհրդա-իրանական պայմանագրի վերաբերյալ նշված փաստարկներից ո՞ր չորսն են ճիշտ.**

ա. Իրանն իրավունք էր ստանում Կասպից ծովում ազատ առևտուր անելու:
բ. Իրանում ստեղծվում էր Իրանի կոմունիստական կուսակցությունը:
գ. Իրանը պարտավորվում էր չեղյալ հայտարարել Անգլիայի հետ ստորագրված առևտրական պայմանագիրը:
դ. Ռուսաստանը հրաժարվում էր ցարական Ռուսաստանի և Իրանի միջև կնքված բոլոր պայմանագրերից:
ե. Կասպից ծովի հարավային մասում ստեղծվում էր ռուսական կոնցեսիա, որին վերապահվում էր ձկան որս անելու բացառիկ իրավունքը:
զ. Իրանին էին վերադարձվում ռազմական գործողությունների արդյունքում նրանից զավթված տարածքները:
է. Իրանն իրավունք էր ստանում Կասպից ծովում նավատորմ պահելու:
ը. Իրանի հյուսիսում տեղակայվում էին ռուսական զորքեր:

1) ա, գ, զ, ը
2) բ, դ, ե, զ
3) բ, ե, է, ը
4) ա, դ, զ, է

69 **Նշված երկրներից ընտրել չորսը, որոնք ունեն փաստացի վերահսկողություն սեփական տարածքի նկատմամբ և դասվում են չճանաչված կամ մասնակիորեն ճանաչված երկրների շարքին,**

ա. Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետություն
բ. Թայվան
գ. Պաղեստինի ինքնավարություն
դ. Մերձդնեստրյան Հանրապետություն
ե. Հարավային Օսիա
զ. Արևմտյան Սահարա
է. Կոսովո

1) ա, գ, ե, զ
2) բ, գ. դ, ե
3) ա, դ, ե, է
4) ա, բ, դ, ե

70 **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. բեյլերբեյ	ա. Հռոմի պապի կողմից նշանակված կառավարիչ Արևելքում
2. մայորդոմ	բ. մարզի կառավարիչ Օսմանյան կայսրությունում
3. կորտես	գ. իտալական ֆաշիզմի առաջնորդ
4. դուչե	դ. տոհմային ավագանու ներկայացուցիչ Հին Աթենքում
5. էվպատրիդ	ե. դասային միապետության ներկայացուցչական մարմին Իսպանիայում
	զ. թագավորի կողմից նշանակվող արքայական կալվածքների կառավարիչ Ֆրանկական պետությունում

1) 1-ե, 2-զ, 3-բ, 4-ա, 5-գ
2) 1-բ, 2-զ, 3-ե, 4-գ, 5-դ
3) 1-դ, 2-ե, 3-բ, 4-ա, 5-գ
4) 1-զ, 2-ե, 3-ա, 4-գ, 5-դ

71 **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. դոկտրինա
2. դիրիժիզմ
3. դոմինատ
4. պրինցեպս
5. դիսիդենտ
6. դիադոխ

ա. Այլախոհ, մարդ որը համաձայն չէ իր երկրում տիրապետող գաղափարախոսության սկզբունքներին
բ. պետական միջամտություն տնտեսության կառավարմանը
գ. քաղաքական կամ տնտեսական ղեկավար սկզբունք, հայեցակարգ
դ. Քաղաքացիների իրավահավասարության սկզբունք
ե. «Ծերակույտի ղեկավար, առաջնորդ»
զ. Հռոմեական ուշ կայսրության դարաշրջանում ռազմական միապետություն՝ մեկ անձի անսահմանափակ իշխանությամբ
է. Ալ, Մակեդոնացու տերության ժառանգորդ

1) 1-գ, 2-բ, 3-զ, 4-ե, 5-ա, 6-է
2) 1-բ, 2-է, 3-ե, 4-զ, 5-գ, 6-դ
3) 1-գ, 2-է, 3-զ, 4-ե, 5-ա, 6-դ
4) 1-դ, 2-բ, 3-ե, 4-զ, 5-ա, 6-է

72 **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. կոնտրիբուցիա
2. կապիտուլյացիա
3. կոոպերացիա
4. կոսմոպոլիտիզմ
5. լիթուրգիա
6. ավտարկիա

ա. աշխարհաքաղաքացիություն
բ. ընծայաբերում
գ. համագործակցություն
դ. ռազմատուգանք
ե. գերիշխանություն
զ. անձնատվություն
է. ինքնապահովում

1) 1-է, 2-ե, 3-գ, 4-զ, 5-բ, 6-դ
2) 1-դ, 2-զ, 3-գ, 4-ա, 5-ե, 6-է
3) 1-է, 2-ա, 3-զ, 4-գ, 5-ե, 6-բ
4) 1-դ, 2-զ, 3-գ, 4-ա, 5-բ, 6-է

73 **Նշված փաստարկներից ընտրել չորսը, որոնք հանդիսանում են Եկատերինա II կայսրուհու գործունեության հետևանքներ.**

ա. Ռուսաստանի բաժանումը 50 նահանգների
բ. «Ազատ ձեռներեցության մասին» օրենքի ընդունումը
գ. Զինվորական ծառայության նոր կարգի հաստատումը:
դ. Նահանգներում գործադիր, դատական, և ֆինանսական իշխանությունների տարանջատումը:
ե. Կառավարման համապետական մարմինների՝ պրիկազների հիմնումը:
զ. Առաջին անգամ օրենսդրության մեջ «հպատակների իրավունք» հասկացության ամրապնդումը:
է. Ժողովրդական կրթության համակարգի ստեղծումը
ը. Դասային ներկայացուցչական առաջին ժողովի հրավիրումը:
թ. Գիտությունների ակադեմիայի հիմնումը:

1) բ, դ, է, թ
2) ա, ե, զ, է
3) ա, բ, դ, զ
4) գ, դ, զ, ը

74 **Նշված փաստարկներից ընտրել չորսը, որոնք հանդիսանում են Երեսնամյա պատերազմի հետևանքներ.**

ա. Շվեյցարական Միությունն ու Նիդեռլանդները (Հոլանդիա) միջազգային ճանաչում ստացան:
բ. Ավարտվեց Գերմանիայի քաղաքական միավորումը:
գ. Սուդեթի մարզը Չեխոսլովակիայի առանձին շրջանների հետ անցավ Գերմանիային, Լեհաստանին և Հունգարիային:
դ. Լիվոնյան պետությունը և Լեհաստանը ստացան միջազգային ճանաչում:
ե. Իսպանիայից անջատված յոթ պրովինցիաները վերստին վերադարձվեցին Իսպանիային:
զ. Օրինականացվեց Գերմանիայի քաղաքական և դավանաբանական մասնատվածությունը:
է. Իրականացավ քրիստոնեական կայսրություն ստեղծելու Հաբսբուրգների ծրագիրը:
ը. Ֆրանսիան վերածվեց Եվրոպայի ամենաբարձր քաղաքական հեղինակություն ունեցող երկրի:
թ. Բելգիան և Հոլանդիան վերածվեցին ֆրանսիական պրոտեկտորատի:
ժ. Շվեդիան դարձավ Բալթյան տարածաշրջանի հզոր պետություն:

1) ա, զ, ը, ժ
2) դ, զ, է, ը
3) գ, ե, զ, թ
4) բ, դ, թ, ժ

75 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Աքեմենյան տիրապետության հաստատումը Եգիպտոսում
բ. Ամենհոտեպ IV – ի կրոնական բարեփոխումները
գ. Թութմոս I-ի հաղթանակները Միտաննիի դեմ
դ. Քուշի տիրապետության հաստատումը Եգիպտոսում
ե. Նեղոսի դելտայի շրջանում Մեմֆիս մայրաքաղաքի կառուցումը
զ. Եգիպտոսի սահմանների ընդարձակումը Թութմոս III-ի օրոք
է. Ավարիսի գրավումը Յահմոս I-ի կողմից
ը. Ռամզես II-ի և խեթական արքա Խաթուսիլիս III-ի միջև պայմանագրի կնքումը
թ. Եգիպտոսի նվաճումը Ասորեստանի կողմից
ժ. Վերին և Ստորին Եգիպտոսների միավորման ամրապնդումը Ջոսեր փարավոնի կողմից

1) ժ, ե, է, բ, զ, գ, ը, ա, թ, դ
2) ե, ժ, է, գ, զ, բ, ը, դ, թ, ա
3) ժ, ե, է, գ, զ, ը, ա, բ, դ, թ
4) ե, է, ժ, գ, զ, դ, ա, բ, ը, թ

76 **Ճակատամարտերը դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Քիոս կղզու ճակատամարտը
բ. Կոսովոյի ճակատամարտը
գ. Անկարայի ճակատաարտը
դ. Նևայի ճակատամարտը
ե. Սուասոն քաղաքի ճակատամարտը
զ. Մանազկերտի ճակատամարտը
է. Յարմուկ գետի ճակատամարտը
ը. Չուդ լճի ճակատամարտը
թ. Կատալաունյան դաշտի ճակատամարտը
ժ. Կուլիկովոյի ճակատամարտը

1) է, ա, ե, թ, դ, զ, ը, ժ, գ, բ
2) ե, թ, ա, է, զ, ը, դ, բ, գ, ժ
3) ա, թ, ե, է, զ, դ, ը, ժ, բ, գ
4) թ, ա, է, ե, զ, ը, ժ, դ, բ, գ

77 **Մշակույթի գործիչների անունները համապատասխանեցնել երկրների անվանումներին.**

1. Սերվանտես	ա. Գերմանիա
2. Ժակ Լուի Դավիդ	բ. Իսպանիա
3. Ալեքսանդր Դյումա	գ. Հունգարիա
4. Ֆրեդերիկ Շոպեն	դ. Ավստրիա
5. Հայնրիխ Հայնե	ե. ԱՄՆ
6. Յ.Շտրաուս-որդի	զ. Իտալիա
7. Էդգար Պո	է. Անգլիա
8. Ջոակինո Ռոսինի	ը. Ֆրանսիա
	թ. Լեհաստան

1) 1–գ, 2–զ, 3–թ, 4–է, 5–դ, 6–բ, 7–ե, 8–ը
2) 1–բ, 2–ը, 3–է, 4–թ, 5–ա, 6–դ, 7-ե, 8–զ
3) 1–ը, 2–գ, 3–է, 4–բ, 5–դ, 6–ա, 7–թ, 8–ե
4) 1–բ, 2–ը, 3–զ, 4–ժ, 5–ե, 6–ա, 7–դ, 8–ը

78 **Կատարել համապատասխանեցում.**

N	Մշակութային գործիչ	N	Ազգություն	N	Գաղափար
1	Գալիլեյ	1	լեհ	1	Հերձման միջոցով տվեց մարդու մարմնի ներքին կառուցվածքի ճշգրիտ նկարագրությունը:
2	Վեզալիուս	2	իտալացի	2	Ապացուցեց, որ տիեզերքի կենտրոնում արեգակն է, իսկ մյուս մոլորակները՝ այդ թվում՝ Երկիրը, պտտվում են նրա շուրջը:
3	Կոպեռնիկոս	3	գերմանացի	3	Ըստ նրա ճշգրիտ գիտելիքը կարելի է ձեռք բերել փորձի միջոցով:
4	Բեկոն	4	Ֆլամանդացի	4	Ստեղծեց ամենախոշոր աստղադիտակը և առաջինը դիտեց արևային բծերը:
		5	անգլիացի	5	Ըստ նրա աստղերը հեռավոր արեգակներ են, որոնց շուրջը պտտվում են մարդկանցով բնակեցված մոլորակներ:

1

1	2	4
2	4	1
3	1	2
4	5	3

2

1	1	4
2	5	3
3	4	2
4	2	5

3

1	2	5
2	4	3
3	3	1
4	1	2

4

1	4	3
2	3	1
3	2	5
4	5	2

79 **Կատարել համապատասխանեցում.**

N	Անուն	N	Գործառույթ	N	Դիցարան
1	Դին	1	Արևի և արվեստների աստված	1	Շումերական դիցարան
2	Իսիդա	2	Անձրևի, կայծակի, քամու տիրակալ	2	Զրադաշտական դիցարան
3	Ահուրամազդա	3	Սիրո և մայրության աստվածուհի	3	Չինական դիցարան
4	Պոսեյդոն	4	Ծովերի աստված	4	Եգիպտական դիցարան
		5	Երկնքի, երկրի, մարդու և մարդկային երջանկության արարիչ	5	Հունական դիցարան

1

1	5	3
2	3	5
3	1	2
4	4	1

2

1	3	4
2	1	2
3	2	3
4	5	1

3

1	2	4
2	3	3
3	5	2
4	1	5

4

1	2	3
2	3	4
3	5	2
4	4	5

80 **Կատարել համապատասխանեցում.**

N	Երկիր	N	Գործիչ	N	Տարեթիվ	N	Գործունեություն
1	Իտալիա	1	Շառլ Դը Գոլ	1	1958 թ.	1	Ընդունեց «երկու երրորդի հասարակություն» կառուցելու գաղափարը:
2	ԱՄՆ	2	Մ.Թեթչեր	2	1971 թ.	2	Կուսակցությունների վարչակարգի փոխարեն առաջարկեց վերստեղծել «իրական ժողովրդավարություն»՝ պետության ղեկավարի ուղղակի ընտրություններով և հանրաքվեներով:
3	Ֆրանսիա	3	Ջոն Քենեդի.	3	1987 թ.	3	Հռչակեց «Առաջ Իտալիա» կարգախոսը
4	Մեծ Բրիտանիա	4	Ս.Բերլուս կոնի	4	1994 թ.	4	Առաջ քաշեց «նոր սահմանագծերի» կարգախոսը
		5	Թ. Բլեյեր	5	1960 թ.	5	Ծրագրեց «Մաքուր ձեռքեր» գործողությունը

1

1	4	4	3
2	3	5	4
3	1	1	2
4	2	3	1

2

1	4	2	5
2	3	5	2
3	1	3	1
4	2	1	4

3

1	5	4	5
2	3	5	1
3	4	2	2
4	2	3	3

4

1	5	4	3
2	1	3	2
3	3	5	1
4	2	1	4